

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 փ.
Վեցամսեայ 6 «


ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ
2 քիւ մեկ ծրարով
Տարեկան 14 փ.
Վեցամսեայ 7 փ.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 քիւ
Վեցամսեայ 1.50 «

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուկան տղր
20 ամսիկի



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev Père G. Kalemkarian
te ngasce N 4 Vienne

Rédaction du journa

„Iravounk“

R N A (Bulgarie)

ЮЦИЯ

НА ВЪСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնի և
չիւ տրուի

ՄԱՏՆԻՉԸ ԴՈՒՐՍ

Սուլթանի ծննդեան տարեգար-
ձին առթիւ այլ չորեքշաբթի օր
կ. Պոլսոյ Մայր եկեղեցիին մէջ
բացառիկ արարողութիւն ու բա-
րեմաղթութիւններ կատարուեցան
ընդ նախագահութեամբ Օրման-
եանի և ի ներկայութեան եկեղե-
ցական և աշխարհական ժողովու-
կաններու ու ազգային պաշտօն-
եաներու։ Աւետարան, շարական-
ներ ու մաղթանքներ կարդացուե-
ցան, և Սուլթանի կենաց բարե-
մաղթութիւններ եղան առ Աստ
ուած։

Մեր կրօնական հայրերը ժողո-
վուրդը կրօնասիրութեան և եկե-
ղեցի կը հրաւիրեն անդադար, ու
կուգին կրօնական զգացումները
բարձր ու անաղարտ պահել ժողո-
վրդեան սրտին մէջ, և եկեղեցա-
կան դասուն համար խորին ակնա-
ծանք ու յարգանք տաճել կը
յանձնարարեն, մինչդեռ իրենք կե-
լին աստուածային սուրբ տաճարը
կեղծիքի ու շողոքորթութեան թա-
տրավայր մը դարձնել, Սուլթա-
նին շարքները բարիք անուանե-
լով, ժողովուրդը տաճարէն դուրս
կը խաբեն, իսկ տաճարէն ներս կեղծ
մաղթանքներով Աստուած ալ խա-
բել կը ջանան, Հայ հասարակու-
թեան էն նուիրական զգացումնե-
րը, սրբութիւնները, դաւանած
կրօնքը և երկրպագած Աստուածը
այս աստիճան ցած շողոքորթու-
թեան, խաբէութեան գործիք դար-
ձնելէ վերջ, ալ ի՞նչպէս կարելի է
այդ հասարակութենէն յարգանք
ու ակնածանք սպասել դէպի եկե-
ղեցական դասը։

Բայց այդ ստրկամիտ եկեղե-
ցականները պիտի ըսեն թէ «Ի-
հարկէ ստիպուալ կը գործենք այս
կեղծիքը»։

Ո՛չ, սո՛ւտ է այդ։ Միայն Ա-
լըքեանի մը, Օրմանեանի մը և ի.
րենցպէս մէկ քանիններու տկարա-
մըտութիւնն էր որ ազգին դահիճ ե-
ղող բռնակալներու գարշելի ա-
նունները մեր եկեղեցիներուն մէջ
յիշատակելու, օրհնելու, անոնց
համար մաղթանքներ կարդալու և

վերջապէս այսօր ալ մասնաւոր ա-
րարողութիւններ կատարելու պիտի
սովորութիւնը մտցուցին մեր ա.
մենանուիրական յարկին տակ։

Ոչ երկրին օրէնքը—Տաճկաս-
տանի համար կըսեմ—և ոչ վեհա-
պետներէ մէկը չունի և չէ ունե-
ցած այն յանգեցումները որ ե-
կեղեցիէն ներս ալ զինք շողոքոր-
թել ու փառաբանել պահանջէ։
Ոչ թէ տաճարը, այլ եկեղեցիին
գաւթին ալ ազատ է և պէտք է
ազատ ըլլայ այդ տեսակ ճնշու-
մներէ։ Ճանկրելեան մը, հայ ժո-
ղովուրդի ցասումին մարմնացումը,
չի հանդուրժեց Սուլթանին բռնա-
դատ Պատրիարքարանի սեւմէն
ներս տեսնել ու զայն ջարդ ու փը
շուր ըրաւ։ Բայց այսօր ամբողջ
Պոլսոյ Հայութիւնը 300000 հայ
ջարդող Սուլթան համար եկեղե-
ցիին մէջ փառաբանուած կը գտ-
նէ եւ ոչխարային համակերպու-
թեամբ մը պիտի բերաններէ յի-
շուած մաղթանքներու անկէ կըսէ։
Ո՛ր աստիճան ալլասեաւ...

Ազգի մը կրօնական զգացում-
ներուն համաթուիչ կընթանայ ա-
պագայ սերնդեան բարոյական
դաստիարակութիւնը։ Ինչ որ է
եկեղեցիին նոյնն է վարժարանը,
և ալ աւելին։ Այո՛, ալ աւելին,
քանի որ հոն կը պատրաստուին
ազգին ապագայ եկեղեցականները,
դաստիարակները, հանրային գոր-
ծիչները և վերջապէս ընդհանուր
ապագայ Հայութիւնը։ Եթէ մեր
հայրերը իրենց ժամանակի վար-
ժարանները բարոյապէս լաւ դե-
կավարէին, չի պիտի ունենայինք
այսօրուան ստրկ օրմանեանը,
երէկի Ալըքեանը, Մամբրէն,
Թիւթիւճիէֆը և ուրիշ դաւաճան
ներ կամ մատնիչներ։ Իսկ այժմ
եթէ մենք չզիտանք մեր կրթա-
կան հաստատութիւններու բարո-
յական մակարդակը տմեն նկա-
տումներէ բարձր պահել, չի պի-
տի դադրիք ապագային և նոյն
իսկ ներկային մէջ մեր շուրջը և
մեր նուիրական հաստատութեանց
մէջ ունենալէ Օրմանեաններ իւր
պատրիարք, Մամբրէններ իւր

վարդապետ և իւր Սարգիսկան-
ներ իւր վարժապետ։

Այսօր ոչխարային համակերպու-
թիւն Պոլսոյ մէջ, որովհետեւ հոն
բռնութիւնը կը թագաւորէ։ Բայց
վաղը ժողովրդեան ցասումի պոռթ-
կումը անխուսափելի է, որ պիտի
գայ մաքրել մեր տաճարները
պիտի և կեղծաւոր եկեղեցա-
կաններէ։ Սակայն արտասահմանի,
մասնաւոր ազատ Պուլկարիոյ Հա-
յը բնաւ այդ համակերպութիւնը
չպիտի ունենայ, և սա կարճատեւ
համբերութենէն վերջ, պիտի գիտ-
նայ իր վրէժխնդրութենէն զողա-
հար ձեռքով օձիքէն բռնել մատ-
նիչ վարժապետին և զանի դուրս
քաշել վարժարանէն։ Պո՛չրաւ։

Ժողովրդի այս իրաւունքը թէ՛
օրէնքի և թէ՛ խզի առջեւ ան-
բռնաբարելի է։

Գոռպէր

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԳԵՐ. ՆԱՍԱԿ

(Շար. նախարդ քսիւն)

Այսպէս բաղնիցայ զօրաւոր ընդդի-
մութեան մը։ Զգացումս սակայն այն
էր որ ընդդիմութիւնը չը պիտի վա-
ւերացուէր անխտրաբար, ոչ բոլոր
դաշնակցականներէն, ոչ ալ հանրա-
յին կարծիքէն։ Հարկ էր որ ասոնք
գործին միջամտէին իրենց անախա-
պաշարեալ ուղղամտութեամբ։ Այս
միջամտութիւնն առթիւ համար,
խմբագրեցի եւ հրատարակեցի այն
նամակը որ ստորագրուած էր Իսկէն-
կէտէի եւ Յակոբեանի։ Այս մասին
ստացայ հետեւեալ գիրը։

Ժընէվ, 3 ապրիլ 900

«... Գաջ տեղեակ իննելով մեր
տրամադրութեան, դուք չպէտք է
այժմեանից բարձրացնէք զատիւ հար-
ցը... Մենք անկարող ենք մեր ըն-
կերների առջ պաշտպանել մի բան,
որին հակառակ էինք ինքներս, եւ
միւս կողմից. դուք հրապարակաւ մեզ
դէմ առ դէմ էք կանգնեցնել կողմնա-
կի անձնաւորութիւններ եւ գուք միջա-
մութիւն մէջն էք կամենում մնալ։
Այսու ամենայնիւ կը տպագրենք պրն.
Իսկէնտէրի եւ Յակոբեանի նամակը»
Արեւելեան Բիւրօ(»

(*) Սրեւելեանը կարդալու է Արեւ-
մըտեան

Ժընէվ ուրեմն դժգոհ էր։ Բայց
գործադրած միջոցս, այսինքն հան-
րային կարծիքին միջամտութիւնը
ներգործեց դաշնակցականներու մե-
ծագոյն մասին վրայ։ Եւ, չիտակը,
աւելին չէի կրնար սպասել կուսակ-
ցութենէ մը որ մինչեւ ցայն վայր
այնքան հակառակ էր դատի կէտին
վրայ զիջում ընելու։ Ահաւասիկ այս
չատ գովելի եւ պատուաբեր զիջողու-
թիւնը ծանուցանող նամակը։

Ժընէվ, 31 յուլիս 900

«... Դաշնակցութեան կամքը ար-
տայաւոր մարմինի որոշումը Պատուոյ
ատենանին մասին ամփոփուած է հե-
տեւեալ կերպով. մերժել արգէն տը-
րուած միութեան հարցից դուրս ան-
հատական խնդիրներով զբաղելու ա-
ռաջարկը, ինկասի ունենալով որ
միութեան պայմաններում պատշաճ տեղ
է տրուած երկու կողմի ամբաստան-
եալների համար հիմնելիք դատարա-
նին...»

Արեւելեան Բիւրօ

Արդիւնքն ակնհայտ էր այլ ուս.
Դաշնակցութիւնը կը մերժէր եւ ի
րաւամբ, անհաստով մը զբաղելու,
բայց կընդունէր որ միութեան պայ-
մաններէն մին ըլլար դատարանի մը
կազմութիւնը. որուն ներկայութիւնը
Պ. Արփիարին խնդրէր, ինչպէս ու-
րիշ ամբաստանեալներ, եթէ կային։
Ժիշդ առաջարկածս էր։

Բոլոր այս ժամանակին ուր դաշ-
նակցականները կիրաւորէին զգալի
բարեշրջում մը, կը մտնէին զիջո-
ղութեանց փուլի մը մէջ, հնչ. կեղբորնը
իր 5 կամ 7 անդամներով ուրիշ բան
չէր ըսեր ինձ բայց եթէ Հոսով պա-
պին ծիծաղելիօրէն հուշակաւոր դար-
ձած «Ոչ կարեմք»։
Ահա այս կէտին վրայ ասոնց հետ
ունեցած թղթակցութիւնս

Աղեքսանդրիա, 15 մայիս 900

«... Յաւելուածին հրապարակ հա-
նուելէն վերջը, հարկաւոր անհրա-
ժեշտ է նախ նախատինքը սրբել,
յետոյ միութեան մասին խորհիլ, եր-
կու գործը զուգնթացաբար չի կրնար
կատարուիլ...»

Կեղբ. Վարչութիւն

Լեւոն Բալիււանդ Ապահուելի

Պոսթօն, 17 օգոստ. 900

«... Ես կը մտածեմ թէ դուք սը-
խալ մը ըրիք ձեր նախնական առա-
ջարկին մէջ Արփիարին անպայման
հեռացումը պահանջելով, քանի որ
առժամեայ դատարան մը երկու կող-
մի անբաստանեալները դատելու պաշ-
տօն պիտի ունենար։ Արփիարն ալ
յանձնելու էիք այդ միւս նոյն դատա-
րանին...»

Յայտնի կը պահուի թէ Պն. Փա-
փազեան ինքն է որ չարաչար կը սը-
խալի ինձի վերադարձով սխալ մը գոր-
ծած չեմ : Արքիարը յանձնած եմ
այդ դատարանին :

Լօնտոն (անթուական)

« ... Բնացարձակապէս որոշուի են
որ մինչև պատուոյ ատեանին վճիռը
չարձակուի, ո եւ է համաձայնու-
թիւն կարելի չէ միութեան համար,
նոյն իսկ բանակցութիւնները չեն
կարող սկսիլ : Այդքանորից երկու
կուսակցութեան մտանշնդերը կու-
զէին լարան մը հիմնել, իբր սկզբ-
նաւորութիւն եղբայրակցութեան բայց
մերիները բացարձակապէս մերժե-
ր են այս գաղափարը, կեզրոնը յայտա-
բարելով որ մինչև Արքիարի խնդ-
րին լուծումը, որ եւ է խնդրի հա-
մար անկարելի է համաձայնութեան
յանգիլ : որքան որ պզտիկ ըլլայ այդ
խնդիրը ... »

Ա. Արքիարեան

Այս նամակը չ'ապացուցանուի փա-
րիչներու մեծամեծութիւնը : Ահա
մինչև ուր հասած էին :

Եթէ հայ մը, որ դաշնակցական է,
ուզէ լաւան մը հաստատել ուրիշ հա-
յոյ մը հետ որ հնչակեան է. Կ.
վարչութիւնը կ'միջամտէ իսկոյն,
այս ազգային եւ անհատական աղէտը
արգիլելու համար :

— Ի՞նչ, դու հնչակեան, չե՞ս ամ-
չանք : Լաւա՞ն մի : Զի՞նքիտեք որ
նախ Արքիարին խնդիրը լուծելու է
եւ յետոյ դու ուզելու ես կրթութիւն կամ
կրթիւն ուրիշները :

Զգացած ըլլալով սկիզբէն իսկ հըն-
չակեան վարիչներուն այս նեղ միտք
եւ նեղ հողի արամադրութիւնը, փու-
թացած է իրենց գրել շատ կանու-
խէն :

« ... Զպէտք է որ հիմնուիք պն.
Իսկէնտէրի եւ Յակոբեանի նամակին
վրայ գոր ես ինքս իսկ խմբագրած
եւ հրատարակած եմ, կարծելու հա-
մար թէ դուք, հնչակեաներդ, կրք-
նաք անջատել Արքիարի խնդիրը միւս
խնդիրներէն, եթէ այդպէս գործէք,
գոյք զբաղած կ'ըլլաք Արքիար դատին »

հարցով, մինչդեռ գործը Արքիարէն
վեր է, եւ որով ես կուզեմ զբաղիլ
այն ալ միութեան հարցն է. . . »

Դարձեալ 4 մայիս 900

« ... Երբ որ միութեան պայման-
ները ընդունիք ամբողջօրէն, ընդու-
նած կը լինիք նաեւ, գուք երկու
կուսակցութիւններդ, դատարանի մը
կազմութեան սկզբունքը : Դայով այդ
սկզբունքին գործադրութեան, այս
ինքն դատարանին, այդ ալ ապա-
հովեալ է : Դիտէք որ երկու կուսակ-
ցութիւններէն ամեն մին իր յատուկ
լիազօրները պիտի ընտրէ, որոնք մէկ
պաշտօնն ալ է դատարանը կազմել եւ
դատարանը ընել տալ : Անվատած էք
միթէ հիմակուէն ձեր ընտրելիք հն-
չակեան լէազօրներուն, իբր ճշմարիտ
յեղափոխական, աշխատելու էք որ ոչ
մէկ կուսակցութիւնը եւ ոչ միւսը
չենթարկուի դատապարտութեան մը
հաւանականութեան, այլ դատի հա-
նել միմիայն հնչակեան անհատները
եւ դաշնակցական անհատները—ինչ
որ կարելի է միութեան հետ զուգն-
թացաբար : Միութեան անաշտ ուղի
դատել՝ այդ է հնչակեան կուսակցա-
կան կոխ մը շարունակել եւ զերար
խորտակել ... »

Հնչակեան վարիչները շարունակե-
ցին ինձի պատասխանել, նախ Սր-
փար եւ յետոյ Ազգ. միութիւն, եւ
Յեղափոխութիւն :

Հոս կը վերջանայ բանակցութեան-
ցըն առաջին մասը, կայ երկրորդ մաս
մըն ալ. Բայց այսքանով իսկ հնչակ-
եան պարզ անդամները եւ հանրային
կարծիքը—կրնան ձեռնարկել դատելու
հնչակեան մէկ քանի վարիչներու ըն-
թացքը միութեան համար բրա՞ այս
փորձիս մէջ : Ըստ իս, անկեղծու-
թիւն չըկար եւ ոչ ալ նամանականդ
ըջութիւն :

Ընդունեցէք, Պրն. խմբագրապետ,
յարգանաց հաւաստիքը :

ՄԽԻԹԱՐ



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Աթէնք, 7 նոյեմբեր 1901

Այսօր Աթէնք ապստամբեցաւ :
Պալատականները ուսական թե-
լագրութեամբ, կուզեն Ահտա-
րանը և Աստուածաշունչը գրա-
բարէ աշխարհաբարի թարգմա-
նելով գործածել հեղեղեցիներու
մէջ, տգէտ հասարակութեան հա-
կանալի ընելու գիտաւորութեամբ :
Համալսարանականները ուսական
խորամանկ քաղաքականութեան մէջ
սլաւօնական ապագայ ձուլումի մը
նպատակը շարեւելով կապտամբին :
Պատահաբար աւելի ամբոխ
մը, միտքած բոլոր համալսարան-
ներու բարձրագոյն ուսուցիչներու,
ուսանողներու ու կղերականներու
հետ, դրօշակներ և թովսկի մատ-
րիարքի պատկերներ ի ձեռքն ազատ
երգեր հրդեհով ժամը 1ին կը հա-
նին պալատի առջեւ : Հոս կը խօ-
սին ժամէ մը աւելի ուսուցիչներ
և ուսանողներ, զգացնելով ուս-
կան այս քաղաքականութեան մը
տանգը իրենց գոյութեան համար : Եւ
թափուր կազմելով բողոքի կուզեն
թափաւորին : Պալատը չըրպաւտ-
ուած է զինուորներով, որք կը
արգիլեն ամբոխին յառաջացումը :
Անգէն ամբոխը կը խուժէ, հրա-
ման կը տրուի կրակ ընել : Հրա-
ցունդագութիւնը ու սուրբիւր չող-
չողումը կըսկսին վայրագօրէն : Եւ
հրաշքով մը կ'ազատուի ամբո-
խին մէջէն և կը պատասխարուի
մատակայ տան մը մէջ : Այսինքն
երեք ժամէն աւելի տևեց : Վիրա-
ւորեալներու և սպանուածներու
թիւը զեռ չը գիտցուի : պատա-
պարուած տան առջեւէն 3 սպա-
նուածներ անցուցին : Ժողովուրդը
յուզուած է. աւելի մեծ ցոյցերէ

կը վախցուի այս օրերու մէջ : Հա-
զիւ ժամը 6ին հանդարտութիւնը
տիրեց : կուսելու եռանդը վառ է
ժողովուրդին մէջ, զինուորայն
բախանդ կընեն :
Յետոյ աւելի մանրամասնօրէն
կը գրեմ, դէպքին ուսումնասիրու-
թիւնները ընելով :

Մ. Ա.

ՔԱՆ ՆԱՄԱԿ

Ռուսնագի հայ հասարակութեան

Պ. Գ. Յակոբեան, Իրաւունքի պատ.
խմբագրութեան ուղղուած նամակով
մը, կը գրուածէր այն տաղարկը
գոր Պ. Դէս ու Դէն ըրած էր հայ
գերասանական խումբերուն, անոնց
ուշադրութիւնը հրաւիրելով սովա-
տանջ որբերուն վրայ, որոնք իրենց
անտանելի կացութեամբը ո՛չ միայն
հայու՝ այլ եւ օտարի կարեկցութեան
ստարկան են դարձած :

Պ. նամակագիրը չբաւականանալով
միայն պղատոնական դրուատիքով մը,
իրեն պարտք կը համարի պատրաս-
տակամութիւն ցոյց տալ յիշեալ որբե-
րուն վիճակին բարոյքութիւն համար
աշխատող մարմիններուն, երբ այս
վերջինները նպատակը կազմակերպե-
լու վիճակին մէջ գտնուին :

Արդարեւ. ասի ուրախութիւն պարա-
գայ մըն է որ կը ներկայանայ Պ. Գ.
Յակոբեանի կողմէն՝ որը ինքնաբե-
րաբար կոչ կընէ Պալատի Որբա-
խումբ ընկերութիւններուն, փափա-
քելով ցոյց տալ թէ, իւրաքանչիւր
անհատ իւրաքանչիւր մարմին—պաշ-
տօնական կամ անպաշտօն—պարտա-
ւոր են իրենց կարողութեան չափով
օգնել մեր ազգի անկախութեան հա-
մար գոհուած հարկը հազարաւոր կրա-
րիներու թողած նոյնքան բազմաթիւ
մանուկներուն, որոնք ստատպանքի
գիրկին ինկած օգնութիւն և կ'աղաղա-
կեն :

Այո՛, անոնք առանց ծնողքի մնա-
ցին, այդ մեծ ցաւ մըն է իրենց հա-
մար, սակայն պէտք չէ որ մենք մեր
անտարբերութեամբը պատճառ դառ-
նանք իրենց իսպառ սովամահ կորն-

ԴՐՈՇԱԿ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԲԵՐԸ

(Շար. նախորդ թիւէն)

Ի՞նչ եղաւ այս ամենը, միթէ դրանք եւս Դրո-
շակի առհասարակ չ'սիրած բառն է, այսինքն խօս-
քեր : Եւ միթէ երիտասարդ թիւրքերն արդէն ո-
չնչացան, իբրեւ իրենց տեսակի եւ իրանց ուղ-
ղութեամբ սուլթանական օպպոզիցիաների Դուցէ
Դրոշակի անհրաժեշտ համարած « ժամանակ »ը դեռ
չէ հասած, դուցէ « խօսքից » կը ժայթքէ իսկական
գործը : Լաւ չէ՞ր լինի սպասել ... : Հարցեր :

Դրոշակն ասում է. « Ինչպէս միանանք, երբ
երիտասարդ թիւրքերը յարձակուի են միայն Սուլ-
թանի վրայ, կարծես թէ նրա վերնալով, ամեն
ինչ կը կարգադրեն » եւ չեն քննադատում « ներքին
կաշկանդիչ գործօնները » : Բայց միթէ նորութիւն
է որ երիտասարդ թիւրքերը հէնց սկզբից մինչև
այժմ միշտ յարձակուած են միայն ներկայ Սուլթա-
նի վրայ : Միթէ նորութիւն է որ երիտասարդ
թիւրքերն ո՛չ ալ ինչ է եթէ ո՛չ, ճիւղաւորակաւ
պայքարի արտադրութիւն, պալատական դժգոհ
կայսերականների մտաւոր ներկայացուցիչներ, ո-
րոնց նպատակն է մէկ Սուլթանի տեղ, միւսը դը-
նել, « խորհրդարանով միասին : Թիւրքեցի » Մէշ-
վէրէթ եւ Օսմանլի : Միթէ միութեան արգելա-

ոթի այս պատճառը գոյութիւն չ'ունէր տարիներ
առաջ, երբ Դրոշակը միութեան էր քարոզում :
Հէնց առաջին « բացարձակ յեղափոխական շրջաբե-
րական »ի մէջ, որը այնքան ոգեւորեց Դրոշակին,
ինչ է աւուած, եթէ ոչ այն թէ « անհրաժեշտ է
սպաննել կաշառ շունը » : Եւ հրկրորդ, Դրոշակն
ասում է. « Ինչպէս միանանք, երբ նրանք արդա-
րացնում են հայկական կոտորածները եւ բացասում
են հայկական հարցը, իբրեւ միջազգային խնդիր » :
Չարմանալի բան : Մի Ահմէտ Ռիզա գրել է թէ եւ-
րոպական տէրութիւնները իրանք զաղաններ են
իրանց շահերի նկատմամբ, եւ դատապարտում են
Սուլթանի զաղանութիւնները, եւ թէ, եթէ Ալի
փաշան գերմանական պաշտօնեայ լինէր Չինաստանի
մէջ Վիկտորիայի չքանչաւ կ'ստանար Այս « խօսքե-
ր » համար Դրոշակ թշնամանում է երիտասարդ
թիւրքերի հետ : Անկասկած, եթէ Դրոշակը մի
« շրջաբերական »ով յայտարարեց թէ « թիւրք ժողո-
վուրդը ոտ է գրել իսկական յեղափոխական ուղիի
վրայ եւ հայի ու թիւրքի շահերը միացել են », մի
Ահմէտ Ռիզայի յօդածով էլ պիտի յայտարարեր
թէ ամբողջ երիտասարդ թիւրքերն, նրա հետ եւ
թիւրք ժողովուրդը, թշնամի են հայերին : Սակայն
երիտասարդ թիւրքերի անտարբերութիւնը դէպի
հայկական կոտորածները ըղձում է այն բանից, որ
նրանք պահպանում են թիւրքերի, իբրեւ պետու-
թիւն, իսկ հայերը ձգտում են ազգային անկա-
խութեան : Բայց միթէ տարիներ առաջ Դրոշակը
չգիտէր որ նրանք հակառակ են « հայկական հար-
ցին », եւ տգիտում են ամեն բարենորոգութեան
հասնել թիւրքեայի ներքին վերակազմութեամբ :

Հինգ տարի է որ տպուած է Մէշվէրէթ եւ երեք
տարի — Օսմանլի, միթէ Դրոշակը մինչև այժմ
չ'գիտէր նրանց ուղղութիւնը, չ'գիտէ՞ր որ նրանք
ձգտում են հիմնել մի գործող տանկական պետու-
թիւն : Հարցեր : Եւ հարցեր :

Վերջապէս, ինքը Դրոշակը ե՞րբ քննադատեց
այդ « ներքին կաշկանդիչ գործօնները » : Ե՛րբ զար-
թեցրեց այդպիսի տնտեսական հարցեր : Դարձեալ
հարցեր :

Դրոշակն ասում է : « Ինչպէս միանանք, երբ
նրանք բարոյական եւ վստահելի խմբակներ չեն,
երբ նրանք ապրումա ճարող կարիւրներ են » :
Ինչ գիտեր : Երիտասարդ թիւրքերը պաշտօնապէս
կաշառեւ են մի քանի անգամ, գնո 1897 թւից ըս-
կած, ինչպէս է որ Դրոշակը 1898ին գրում է թէ
մենք սիրով ընդունեցինք « օսմանլու հրաւերը » :
1899ին, գրում է թէ « երիտասարդ թիւրքերը կա-
շառակերութեան չտեսնած օրինակներ տւին, բայց
այդ ոչինչ, նրանք ստեղծեցին թրքական շարժու-
մը » : Իսկ այժմ այդ կաշառակերութեան վրայ ի՞նչ
մի մեծ փաստ եւս նախադաւ : որ Դրոշակը յետ է
մղում միութիւնը կաշառակերութեան պատճառաւ :
Եւ վերջապէս, եթէ այն ժամանակ կոյնի էլ կա-
շառածներ, այժմ էլ կան, ինչո՞ւ Դրոշակը ան-
պրօ, մերժում է ամենքին : Կաշառակերութիւն մի-
թէ յանցանք չէր այն ժամանակ եւ յանցանք է
այժմ : Ամեն կողմ հարցեր :

Դրոշակն ասում է. « Ինչպէս միանանք, երբ
զրանք բարենորոգիչներ են եւ մենք յեղափոխա-
կաններ » : Սակայն որի՞ համար գաղտնիք է որ ե-
րիտասարդ թիւրքերի մէջ սկզբից ի վեր հար եր-

չկուրն. անոնց պէտք ունինք. եւ այս պէտքը ամեն մէկ ազգասէր հայ զգացած ըլլալու է:

Ան այս, իմ կողմէս կը մնայ միայն յուսով սպասել տեղւոյս Որբախնամ ընկերութեան ընկերք շուտափոխ կարգադրութեան եւ արդոյ հասարակութեան ցոյց տալիք անմիջական քաջակրթութեան, քանի որ արդէն ժամանակն է նպատակաւ անօթութենէ զատ՝ ցուրտի մահ սպառնացող վտանգին հնթարկուած հայ որբիկին:

Այսօրուան որբը վաղը մեծ դեր ունի կատարելիք:

Խ.

Ռուստու. 9 նոյեմբեր

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՄՏԱԾՈՒՄ ՄԸ

Վերջին պահուս կը լսենք. թէ —եթէ ստույգ է—, տեղւոյս ուղի վարժարանաց հոգաբարձուներէ ու մանք կը մտածեն եղբեր որ, եթէ մատնիչ վարժապետը վարժարանէն արտաքսեն, քաւ տարուստեն նեղուելով կրնայ թրքական լրտես մ'ըլլալ. հետեւաբար անոր մեղա-յազիր մը ստորագրել տալով կրկին պահել կը խորհին եղբեր. Այս կերպ տարօրինակ մտածում մը մեր ուղեղին մէջ չի սղմիր. սա կը նշանակէ, նախ՝ մատնիչները բռնաւորել, երկրորդ՝ ճամբայ բա-նալ բարոյապէս տկար եղող տմեկ յեղափոխականի կամ ազգ. պաշտօնեայի առջեւ, որ իր գործին կամ պաշտօնին մէջ մշտնջենաւոր սպէս մնալու համար մատնու-թիւն մը գործէ և կամ մատնիչ ըլլալ սպառնայ:

Այդ պարագային ա' ո՛ր կը մնայ ազգային բարոյականը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս կերեւայ, կիւիկիոյ կա-թողիկոսական ընտրութեան գործը կրկին Դրան կողմէ գծաւորու-

թեանց կը բաղնի: Երկու տարիէ ի վեր անկի ունեցած բանակցու-թեանց համեմատ, ընտրողք Ու-տանայի մէջ փեցունուն ցանկ մը քուէարկած էին. այդ ցանկը Դր-րան մատուցուեցաւ անյուշակա, որ պէսզի որբագրուի? ու վերագոր-ծուի: Դրանք աստիճան քուէարկու-թեան արդիւնքէն գոհ չը մնալով, փեցին տեղ 13 անուններու ցանկ մը կ'ուզէր Պատրիարքարանի խառն ժողովէն. Օրմանեան կայր համա-կերպութեամբ մը, վերջին ժողո-վին պատրաստել կուտայ այդ նոր ցանկը ու Մեծ-Եպարքոսին կը զրկէ. ու յետոյ ինքն ալ անձաւք կը ներկայանայ Եպարքոսին ու կրօնական և դատական գործոց նախարարին: Տեսակցութեանց արգիւնքը առայժմ գաղտնի կը մնայ. բայց այդ ձգձգումները այն ցոյց կուտան, թէ Դրանք ա-մեն ենթրիք կը դուրսն ուրպէս զի Օրմանեանի, Բարթողիմէոսի կամ Միսրոպի պէս ազգէն չի սիրում եկեղեցական մը Միսի Աթոռին կաթողիկոս տեսնէ: Կը կարծենք թէ ընտրողք պիտի գիտնան ի-րենց քուէները անբասիր եկեղե-ցականի մը տալ, եթէ բոլորովին չի կաշկանդուին:

—Կարնոյ Տեղապահէն այսչո-րեքշաբթի գիշեր Պոլսոյ Պատրի-արքարանը հասած է հետեւեալ հեռագիրը.

«Երկրաշարժը կը շարունակէ: Չմիայն սաստկութիւնը բազմա-պատկուած է, և ժողովրդեան թշուառութիւնը լրակատար»:

Այս հեռագրէն օր մը առաջ, ստացուած ուրիշ հեռագիր մը երկ-րաշարժին երեք օրէ ի վեր դադ-րած ըլլալը կ'իմացնէր:

Պատրիարքարանի, ձեռնարկած Կարնոյ արկածեկոց ի նպատակ հան-գանակութիւնը 1300 ոսկիի հա-

սած է:

—Ստեփան փաշա Ռուսանեան, Բ. Ատենապետ Քաղ. Ժողովոյ և երեսփոխան, աղիքներու խցման (պարտաւոր տեղեւոր) և քաղցկե-զի (քանակ) հիւանդութենէ կը տառապի. վիճակը յուսահատական է:

—Պաշտօնիոյ այցելու հովիւ, Կեր Տ. Բարթողիմէոս վրդ. ի հը-րաժ սրահները չէ ընդունուած եւ իրեն յանձնարարուած է որ քիչ մ'ալ պաշտօնը շարունակէ մինչեւ որ Պաշտօնախառն տաղանքի մը կարգադրութիւնը ըլլայ:

—Հինգշաբթի իրիկուն քաղա-քէն «Սանդղակ» սրահին մէջ տե-ղի ունեցու վաճառ (Մամիկոնեան ազգային թատերագութիւնը վէ-սեթո հայ դերասանական խմբի կողմէն):

Ներկայացումը յաջող անցաւ. սակայն ցաւալի է որ հանդիսա-կանները խուճրը գոհացնելու չափ չէին. սրահին մէջ, բացի եղևու տեղացի երիտասարդներէ, միայն գաղթականներ կը տեսնուէին:

Ինչո՞ւ այսպէս պաղ ընդունելու-թիւն ազգ. երեկոյթի մը:

Ղեկնարկի Ս. Ղազարու վան-քէն խմբագրութեանս զրկուած մահազգ մը կը գուժէ մեզ վերա-պատուելի Հայր Դեանդ Ալիշանի մահը նոյեմբեր 9ին:

Տեղւոյ անձկութեան պատճա-ռաւ հանգուցելոյն կենսադրական և ալ ծանօթութիւնները մեր յա-ջորդ թուին կը յետաձգենք. եւ այս առթիւ միայն կուզենք մեր խորին վշտակցութիւնը յայտնել Միսիթարիան Միաշուկութեան:

կու հոսանք —բարենորոգչական եւ յեղափոխա-կան: Մինչեւ իսկ բարենորոգչականը ստալ էր, զեռ 1896թց, երբ ակաւեց Մէլլէրէթ, իսկ յեղա-փոխականը երեսուն եկաւ աւելի ուշ —1898թն: Օսմանլիկ(՝) հետ: Ի՞նչպէս է որ այդ նկատմանը Դրոշակը չունէր անցնալի մէջ, եւ միտ թիւն էր քարոզում զեռ երիտասարդ թիւրքալի բարենոր-րոգչական չրմանի մէջ, իսկ այժմ միտ թիւնը յետ է մղում, երբ պաշտօնապէս ասպարէզ է եկել «Ե-ղափոխական ոգին»: Մի' թէ Դրոշակն այս բանը չ'զիտէր, բայց ի՞նչպէս չ'զիտենալով միտ թիւն էր քարոզում: Եւ ինչո՞ւ այսքան նեղանալ թէ երի-տասարդ թիւրքալի մէջ «բարենորոգչական» կան. չէ որ ինքը Դրոշակը, որը 1898 Մայիսին զը-րում էր, «զգուշ եմք եւրոպայի առաջ խնդրելոյց ու աղերսելոց, ողբալոց եւ հառաչելոց, ազա-տութիւնը մուրացողից գարշում ենք, դա եւ ցը-նորական է եւ ստրկական ու անպատեալներ», նոյն Դրոշակը ահա երկու տարի է որ «հշանաւոր եւրո-պացիներին» զիմուսներ է անում, «հայկական ինդրի մասին կարծիք» ժողովելով. եւ առանց զանաւանքի խորութեան ամեն տեսակ կոճիքներէ-րի դռներն է բաղաւ. յարմար թէ անյարմար խորութեան Մամուլի կոնգրէսից, մինչեւ սո-ցիալիստական Միջազգային Կոնգրէսը: Իսկ 1899 Փետրուարին այստարաբար էր ուղղում Բերլինի

(*) Կը լսէ՞ արդեօք վառնայի անամօթ խաչագո-ղը, թէ Օսմանլիկ խմբակը գուտ յեղափոխական երիտասարդներէ կազմուած էր 1898ին եւ համակիր էր Հայոց: Այս համակրութեան եւ իրենց գուտ յե-ղափոխական ծրագիր մը ընդգրկած ըլլալուն պատ-ճառաւ էր որ Դրոշակ անոնց ձեռք տուաւ եւ ձեռք ընդունեց, այն ատենն էր որ այդ Օսմանլիկ խմբակը 50 ֆր. զրկեց Օսեսա արտաքրուած երկու հայերու:

զաշնագիրը ստորագրող պիտու թիւններին, մի-յայտարարագիր, որի մէջ մի տեսակ արգաւանջ-ւով հայերի յեղափոխական շարժումը այն հանգա-մանքով որ 61-րդ յօդուածը միայն մեռած ստա, իսկ ժողովուրդը կեղծելով, ուրիշ միջոց չունէր, բայց եթէ բունի միջոցները գիտէր, Դրոշակն առա-ջարկում էր պիտու թիւններին կատարել այն «ինչ պատշաճում է նրանցից արգաւանջութիւնը. պատիւի եւ նոյն իսկ շահները»: Մի' թէ այս էլ «բացարձակ յեղափոխական ոգի է»: Մինչեւ երբ հարցեր:

Դրոշակն ասում է. «Ինչպէ՞ս միանանք, երբ երիտասարդ թիւրքալի մէջ տեղ են դնում Մի' թէ հայտ փաշայի Սահմանադրութիւնը, որն անբաւարար է» (*) իսկ մենք ֆէտէրալիստներ ենք: Նախ, փակադի մէջ, մենք ջերմապէս կը խնդրենք մեր յարգելի կոնֆէրենսից բացառել մեզ այդ «ֆէտէրալիզմ» էութիւնը ընդհանրապէս, եւ Տաճկաստանի վերա-բերմամբ մասնաւորապէս: Այդ բացառութիւնը անհրաժեշտ է նոյն իսկ Դաշնակցութեան համար, որովհետեւ ան «10 տարի է» որ Դրոշակը «ֆե-տէրալիստ է, եւ չ'նայած նրան զժամը թէ կու-ակցութիւնը իրան պարզ հաշիւ տայ թէ ի՞նչ է այդ: Դաշն երիտասարդ թիւրքալին: Մի' թէ Դր-րոշակը նոր իմացաւ թէ նրանք սահմանադրական-ներ են: Իսկ 1897ին Դրոշակի ապաւ թիւրքալի «զգաւագուտ չըջանական խորհրդարան» ի՞նչ էր, եթէ ոչ Մի' թէ հայտ փաշայի Սահմանադրութիւնը: Մի' թէ Դրոշակը չ'զիտէր որ 20 տարուց ի վեր Ե-րիտասարդ թիւրքալը համախմբաւ են այդ սահ-մանադրութեան շուրջ, եւ դա՛ է նրանց ծրագիրն ու կուսակցութեան դաւանանքը: Օսմանլի եւ

(*) Թրքատա թիւրքալի մէջ առաջինը Հուզուր եղաւ. որ Մի' թէ հայտ փաշայի սահմանադրութիւնը բարեփոխելու պէտքը —ի նպատակ քրիստոնէից ան-չուշա— մատնանցէ:

ԻՐԱՌՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ստացած ենք հետեւեալ բաժնեգին-ները.

Տեսարք	Ձր.
Բ. Ջալալագճեան. Եէնիճէ	14
Յ. Բարսամեան Բարիզ	14
Յ. Եաղուպեան գիւղը	6
Գ. Մարինեան Գէմալար	12
Յ. Բիթմիրեան Սուտան	7
Հ. Թորոսեան Գանիրէ	7
Մ. Կարապետեան Գանիրէ	7
Մ. Մարտիկ. Գէօսթէնճէ	16
Խ. Ղազար. Պոթուշան	7
Վ. Մամիկոն Ծաքշան	14
Մ. Եսայեան Պուրկաղ	6
Մ. Սալաւանեան Կրեմէ	10
Կ. Ղազարեան Գէօթէնճէ	7
Գ. Շահին. Սուլիա	16
Գ. Թահմիս. Պուրկաղ	6
Մ. Կ. Սիլիթօֆ	10
Ս. Յակոբեան Թուլշա	8
Յ. Պողոս. Սերպիա	10
Ա. Նազարէթ. Պէռլատ	15
Մ. Անուշեան Իպրաիլ	8
Պ. Սուքիաս. Անեօլու	12
Մ. Ջալուշ Բաշմամահալէ	10
Տ. Եաղուպ. Սահթիսնլըզ	6
Խ. Գէորգեան Իպրաիլ	16
Ն. Թագուրեան Սիլիթէ	15

— ՀԱՅՈՒ ԶԱՒԱԿ Վառնա. — Ա-ռանց յայտնի ստորագրութեան մեզ ուղղուած նամակներ բնաւ նկատու-թեան չեն առնուիր:

— «Ֆիլիթեմ» Ֆիլիպէ. — Ձեր ամ-բաստանագիրը չի հրատարակուիր, քա-նի որ դրական փաստեր չէք ներկա-յադներ:

— ՍԼԻՎԵՆԻ եւ ԵԱՄՊՈԼԻ մեր բա-ժանորդներէն դեռ չ'զճարողները թող փութան իրենց պարտքը զրկել, եթէ չեն ուզեր որ յառաջիկայ զեկտեմբե-րին հրապարակենք իրենց անունները ուրիշ անուններու հետ:

— ՀԱՅ. ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՃԱՌ Ամե-րիկա. — Ձեզ զրկուած «Իրաւունք»-ի հասցէն մեզ վերադարձուցէք կամ ո-րոշապէս գրեցէք որ հասկնա՞ք թէ ո՞ր հասցէն է ջնջուելիքը:

Մէլլէրէթ սահմանադրականներ չէին, ինչո՞ւ Դր-րոշակը տարիներ առաջ չէր մայածում այդ «արգել-ք» ի մասին: Մի' թէ երիտասարդ թիւրքալը առաջ «ֆէտէրալիստներ» էին եւ այժմ յանկարծ դարձան «սահմանադրականներ»: Կարծում էր Դրոշակը թէ նրանք էլ կ'վերածեն «ֆէտէրալիստներին»: Ի՞նչ-պէս եւ ի՞նչ հիման վրայ, կամ երբ Դրոշակը բարձ-րացրեց այդ խնդիրը, բանալուի մանկելով Երիտա-սարդ թիւրքալի հետ: Որ նրանք մի եւ անփոփոխ սահմանադրականներ էին և. եւ, այդ աւելի՛ յայա-նի է. քան թէ այն որ Դրոշակը իր 1891 թիւ 1ի մէջ, հակառակ է սօցիալիզմին և իր պահանջը մօտաւորապէս նոյնն է. ինչ որ է Ներսէս Պապի-արքի ծրագիրը որը զուցէ Սուլթան իր բարի կամքով իրադարձէ. իր թիւ 2ի մէջ — «Սուլթա-նի վարմունքից օրէցօր համոզում է որ ապրա-տամբութիւնից զուրա, փրկու թիւն չ'կալ: Ի՞ր թիւ 3ի մէջ — «Սօցիալիստ Բէթէլի բերանով ջրում է սօցիալիզմը, եւ դնում է իր բաւարար պրոպա-գանդ, իր ծրագրի (արեւմտեան բարբառով) 17-րդ ե-րեսի մինչեւ կէսը «համայնական» է, կէսից յետոյ — իր նպատակն է «ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանի մէջ ձեռք բերել քաղաքական եւ անտեսական ազատութիւն». վերջին երեք քաղաք-երեսի վրայ — բերում է «անկախ մէջ» մի տաճի-քալ պրոպանդ և նախաձեռնողից է «ապագայ ա-զատ Հայաստանին». իր 1898 թիւ 6ի մէջ — «Ֆե-տէրալիստ» է, իսկ 1900 թիւ 9ի մէջ — «Եւ ֆե-տէրալիստ է եւ ազգային եւ միջազգային: Հաս-կանալ կարողացողը թող հասկանայ:

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՆԴԵՍ

—) (—

ՀԱՎԱՍՏԻԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԵ

ԹԻԻՐԳԻՍ

Սթանպոլտան էփրսա ճէրիտէ-
լէրինէ վէրիլէն սոն հափաթիսա-
թտ պինաէն, Պապը Ալի տէվ-
լէթլէրէ խիթապ պիր նոթա զա-
լէմէ ալմագտա ըմըլ: Պու նոթա-
տա՝ թիւրքիանըն տախիլի իշլէ-
րինէ տէվլէթլիլին՝ միւտախէլէ
իթմէսինտէն թէշէքքի պէյան
իտէրէք, պու միւտախէլէ Սուլ-
թանըն թէշէսիրինի գըրմագտա վէ
Պէրլին ահմանմէսի իլէ տէրէօհտէ
իթմիլի իսլահաթըն իճրասընը
միւմքինսիլ իթմէքտէ օլտըղընը
կէօսթլէրէքէք, տէվլէթլէրին թիւր
քիա իշլէրինէ միւտախէլէտէն էլ
շէքքլէրինի թալէպ էյլէմէքտէ վէ
օ վագըթ Սուլթանըն իսլահաթ
իճրասընա պաշլալապիլէճէկինի պ-
յան իթմէքտէ իմիլ:

Տօղրուսը Պապը Ալիին շու-
աղընա հիշ տէրէճէք հօգ տըր:
«Թան» պու հափաթիստէն տօ-
լալը՝ «Թիւրքիա» սէրլէվհասը իլէ
սոն պէնտինտէ տէմիշ աիր քի՝
Պապը Ալիին պու թէքլիֆի էվ-
րօքանըն կէօղլէրինտէն վէ նէզա-
րէթինտէն իրագ էրմէնիստան վի-
լայթլէրինտէ իճրա օլան գըրկըն
լարը անտըրըր:

«Տէվլէթլէր հէր վագըթտան զի-
յատէ չիմսի Սուլթանը սէրպէսթ
պրագմագլէ քէնտիլէրինի մէսու-
լիլէթէ տիւշար իթմէքտէն՝ եանի
եէնի գըրկընլարա մէյտան վէր-
մէքտէն՝ սագընաճագլար տըր:»

— Սթանպոլ կաղէթալարը եէնի
կէօմրիկ թարիֆէսինին Մարտ-
ան լիթիպարէն մէվգըր իճրայը
գօնըլաճաղընը եաղմըլար տըր:
Մէվգըր լարիֆէ մուճիպ էննէ.
պի մալարընա աղըր կէօմրիք
«աղընաճագ տըր: Ֆաղաթ տէվլէթ.
էրին ըլլի ալմագըղըն պու հօլ-
տա պիր թարիֆէսին իճրայա գօ-
նուլմասը միւմքինսիլ տիր. օնլա-
րըն ըլլի ալմագ իշլէն եէնի թի-
ճարէթ՝ ահմանմէլէրի թանգիմ
իթմէք լաղըմ օլտըղընտան, կէօմ-
րիլէրին շիմտիքի հաթի հաղրէ
պիր գաշ Մարտ տահա տէվլէթ ի-
տէճէքլէրի շիւրհէսիլ տիր:

— Պապը Ալի Օսմանը պան-
քաղընտան 600,000 իլրա եէնի
պիր իսթիքրագ իթմէք իշլէն միւ-
զէքէրէ իթմէքտէ տիր. պու իս-
թիքրագա թէմինաթ օլմագ իւզ-
րէ՝ վիլայէթլէրտէն պիր գաշընըն
էօշիւր հասըլաթընը թախսիս իթ-
մէք թէքլիֆ իտէյօր: Մէքքէյէ
կէօնտէրլէճէք օլան հէտիլէրի ի-
շլէն էվլէթի կիւն 40000 իլրա
իսթիքրագ իտուպ, կէօմրիք հա-
սըլաթընտան թէմինաթ կէօսթլէր-
տի: իշլաւ 600000 իլրա իսէ Բա-
մաղան վէ Պալարա միւտախէլի
իլէ մաաշլարըն էօտէնիլմէսինէ վէ
սայիր լէվագիմաթա թախսիս օ-
լընաճագ տըր:

— Ալպանիտա Շքօտրա վալի-
սի Քիւզիմ բաշա աղլ օլընուպ,
Եէմէնէ սիւրիւմիւշ, վէ տնըն
երինէ եաղէրանտան Շաքիր բա-
շա թալին օլընմըլ տըր: իսլամ
Արնափուտարը թէսքին իթմէք
պէհմէսի իլէ եէնի վալինին մա-
լէթինտէ մագտարը քեաֆի գուվ-
վէի տքէրիլէ տախի մէվճուտ օ-
լաճագ իսէտէ, պու տաքէրլէրին
խրիստիանլարը թաղիք իթմէք-
տէն վէ իսլամարըն ճիւղիլէրինէ
շէրիք օլմագտան մաաշա հիշ պիր
քէրէմէթի օլմայաճագ տըր:

— Սթանպոլտա եինէ եուսուր-
ճագ հըսս օլընմըլ օլմաղլէ կէլէն
հօլըլար իշլէն եէնիտէն գարան-
թինա թախսիս օլընմըլ տըր:

ՏԱՍԻԼԻՑԷ

Սօֆիատքի Ս. Ամերիկա գօն-
աօլուր Ս. Տիքինսըն Սթանպոլ-
տան պուլլար հիւքիւմէթինի մէ-
սուլ կէօսթլէրէն պիր նոթա եօլ-
լամըլ օլտըղընտան, խարիճին նա-
ղըրը Ս. Տանէֆ պիր ճէվապնամէ
եաղուպ, Միս Սթօնը գուրթար-
մագ իշլէն պուլլար հիւքիւմէթի
հիշ պիր թէտպիրտէ գուսուր իթ-
մէթիլ օլարագ, մուվաֆագ օլա-
մաղըղընտան տօլայը քէնտիսի
ասլա մէսուլ օլմագ տէմիլ տիր:

— Պուլլարիանըն սօն իսթիք-
րագ թաշիլաթը զիկա 15էն
սօնրա մէյտանը թէտապիլէէն չը-
գաճագ, Մէվգըր 120 միլիոնա
թէմինաթ օլարագ, էօտիւն վէ-
րէն պանգալարտան միւթէշէքքիլ
պիր սիւնիլգաշա 50 սէնէ իշլէն
թիւթիւն մօնօփօլը վէրլիլէքէք, վէ
մէվգըր սինտիգա պանտօլարը
հիւքիւմէթտէն ալուպ, իթմարէ.
թինտէն 100տէ 40 հիւքիւմէթէ
թէքթ Իտէճէք իմիլ, Պու գա-
րարլէ, էլիէվմ Պուլլարիտա մէվ
ճուտ օլան 80 պապ թիւթիւն
ֆապրիգալարըն գաբանաճագը Թա-
պիր տիր. վէ օնլարա պէտէլ էճ-
նէպի պիր շիրքէթ իսթիֆատէ ի-
տէճէք:

ԵՈՒՆԱՆԻՍԹԱՆ

Ս. Բալլի նամ նամտար մուէս-
սիս (հեղինակ) Աւետարանը եէնի
բուճալա թէրճիլէ իլէ «Ալլօրօ-
լիս» նամ կաղէթտա նէշրէ պաշ-
լամըլ օլմագընտան տօլայը՝ տա.
րիլֆինտան թալէպէլէրի իսթիլալ
չըգարմըլար: Հէր նէ գաուար
մէվգըր թէրճիլմէ էալընըլ քի-
լիստէն տըշարըն էհալինին օգու-
լուպ անլայապիլմէսի իշլէն նէշրէ
պաշլանմըլ, վէ պու խուսուստա
Ալիին Միտրապուլիտի վէ գրա-
լիցա Օլկա հէմէֆքեար պուլընմըլ
Իսէլէրտէ, Գրալ Եօրկի հիշ պիր
թարաֆը իսթիլալա իտէմէյուպ,
եալընըլ իսթիլալա սէպէպիլէթ
վէրմէմէք վէ թալէպէնին ֆանա-
թիլիլինին թէսքին իթմէք մապ-
սէտի լէ Միտրապուլիտին իսթի-
ֆա իթմէսինի միւտախի կէօրմիլ
տիր. զիրա թալէպէլէր միւթէք-

ճիմ Ս. Բալլինին անաթէմա օ-
լընմասընը թալէպ իթմէլէրինէ
Միտրապուլիտ գարշը կէլուպ, է-
հալինին շու ճէհալէթի վէ թաա-
սուպը իւզէրինէ աղալարագ իս
թիֆանաթէսինի գրալ էօնիւնտէ
իմալարըլ տըր: Ս. Բալլի իսէ
Ալիինայը իթմէք իթմէլէ մէճպուր
օլմուլ տըր:

Մէտրապուլիտին վէ զապթիլէ
նաղըրընըն իսթիֆալարընտան սօն
րա տախի, թալէպէ թէսքին օլ-
մաղըղընտան, մէճիւսի վիւքէլա
ուճուճէն իսթիֆա իթմիլ օլուպ,
հէյլէթի վիւքէլա եէնիտէն թէ-
շէքքիլ իթմիլ վէ Ս. Թէոտո-
քիս ըլլիսի վիւքէլա նապ օլըն-
մըլ տըր: Թալէպէլէր տարիլֆի.
նուստան չըգտըլար: Սիւճրիլմէր
մուհաքէմէ օլընտագ:

ԹՐԱՆՍՎԱԼ

Հօրա Քիշէր Բիթթօրիտան
պաթլէլէկրաֆ պիտիլմիլ տիր. —
«Նոյիմ. 19տա վէլլէրստորք ճի-
վարընտա գօմանտան Ֆիշիլըն
ալայը վէ Պօնրէր պէյինտէ շէ-
տիտ պիր մուհալէպէ վուգու պուլ
տը, ինկիլիպ ալայընըն պիլիւն
գօմանտանլարը աղըր սուրէթտէ
եարլէլէնտիլէր. ալալ աճմէթէն
Պօնրէրէ թէսլիմ օլընտը:»

— Ճէնուպի Աֆրիգատա ինկի-
լիլլէրին Պօնր մահալիլէրի վէ
պիքէս ֆաթիլիլալարը վիճտանըլ-
ճա սէֆալէթէ տիւշար իթմէքտէ,
վէ պուլլարտան չօղընըն մէվթիւն
սէպէպ օլմագտա պուլընտըլարը.
նը թապիլալ իթմէք իշլէն, Ս.
Չէմպրէն կէլէն հաֆթա պիր
նուլթ իրատ իտէքէք, 1870տէ
Ալմանլարըն ֆրանսըլլարա վէ Աւս-
տրիալլարըն աղըր գապիլլէրէ
իճրա իթտիլլէրի թէգիլգաթը
զիքր իթմիլ «վէ պիլիմ տախի
Պօնրէրէ իթտիլիլմիլ օնտան ֆար
զը հօգ տըր» տէմիլ օլմասընտան
տօլայը, հէմ Ալմանիտա վէ հէմ
Աւստրիալա էֆքեարը ուճուլիլէ
ինկիլիլլէրէ մուլալիֆ պիր հալ
քէսպ իթմէլէ վէ Չէմպրէնէ գար-
շը նիւմալիլլէր պաշլամըլ տըր:

— Էվրոքա իշլիլլէրի իսթէլլէր-
տէ ինկիլիլ վաթօրլարընը եիւք-
լէթմէմէք վէ պու թարիլլէ ին-
կիլլէլալա գարար իրաա իտուպ,
անը սուլհա մէճպուր էլլէմէք ի-
շլէն, զիկա 16տա բրօկրամլարըն
իճրասընա պաշլալաճագլարընը Ա-
մաղերտաճտան պա թէլլէկրաֆ պիլ
տիրլիլմիլ տիր:

— Ս. Քրիկէրին պէլ թօրու-
լարը ինկիլիլլէր էլիլտէ էօլմիւլլէր:

ՄԻԻԹԷՆԷՎՈՐԻՑԷ

Մահալալան ալընան պիր թէ-
լէկրաֆ «Ալլէթա» նար վաթօրընըն
գարգ օլտըղընը պիտիլլիլմիլ տիր:
200 քիլի պօղուլմուլ հիսապ օլը-
նըլօր:

— Ամերիկատա վենիցուէլա վէ
Քուլմպիա իլի ճուճ, րիլլէթ հիւ-
քիւմէթլէր պէյինտէ մուհալէպէ

տէվամ իթմէքտէ օլուպ, սօն պիր
միւտաթմէտէ՝ հէր իքի թարաֆ.
տան 150 էօլիւ վէ 200 եարլի
տիւշար օլտըլը պիտիլլիլմիլ
տիր:

— Ս. Ամերիկանըն ճուճհարի-
լէթ րէյիսի Ս. Բուլլիլլիլին՝ ա-
մերիկա տաքէլլէրինի ֆիւպա ա-
տապընտան չըգարմագ գաուարըն
տա պուլընտըղընը թէճմին իտի-
յօլլար:

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Այսօր, շաբաթ գիշեր, վէսէլօ
հայ դերասանական խմբին կող-
մանէ առաջին անգամ ըլլալով պի-
տի ներկայացուի «Նարօլիի Ուա-
զանիւր» տրամ-գօմէտի 5 արա-
րուճ և ծիծաղաշարժ զաւեշտ
մը:

Իսկ զաղը՝ կիւրակի գիշեր «Գըն-
չուհին»՝ ծիծաղաշարժ զաւեշտ 4
արար:

Երգ, պարերգ և զաւեշտ մը:

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄՐԻՄՈՆԶ ՀԱՅԱՊԱՆ



Այս երգարանի Բ. տպագրութիւնն
է որ այսօր լոյս տեսաւ, աւելի ճոխա-
յած, բարեփոխուած և մաքուր թուղ
թի վրայ տպուած: Հակառակ գոյն
աժանութեանը, կը պարունակէ այն
բոլոր հին և նոր աղագային երգերը
որոնք ընտիր եղանակ ունին ու կիր-
գուին հայ ժողովուրդի ամեն դասա-
կարգէն:

Գին 1 Ֆր.

Ստանալու համար բոստի ծախքը
10 սանդիկ պէտք է միտմեղ զրկել
Իրաւունքի խմբագրութեան վաճառ:
Կը ծախուի նաեւ Գահիրէի մէջ մեր
գործակատար Տ. Կարապետ Երզնկացի-
եանի խանութը, Ուստը (Ամերիկա)
Տ. Յակոբ Ֆրանգի, Չիքսիկո Տ. Ս.
Գարակապուրեան և Ընկ. քով
Պուգրէ Տ. Ղազար Պօղոսեանի վա-
ճառատունը, Քէօստէնէ Տ. Ղ. Կրօ,
նիկեանի քով:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԵՂԱՐԳՆ ՔԷՍՏԱՆԵԱՆ

—

Կալանքարի, ամեն տեսակ կօ-
շիկ և մոնախալս Լաւտիկ-Կա-
լօշնըր

Վառնա Ուլիցա Բրիտալապա Պուլ-
կար աղգ. պանդալին վէրի կողմը
Սոյն վաճառատուն 15 տարիներէ
ի վեր Ռուսոնի մէջ իր ուղղամտու-
թեամբը ու ապրանքներուն մաքուր-
թեամբը ծանօթ լինելով. այս օրերս
մասնաճիւղ մըն ալ Վառնայի մէջ
հաստատած է, եւ կուգայ յայտարա-
րել թէ քաղաքիս մէջ իր նոր ստա-
նալիք յաճախորդները ըստ ամենայնի
գոհ ընելու համար պիտի ջանայ կա-
րելի եղածին չափ զերաւամալիլի գի-
նորով մաքուր ապրանքներ տալ իրեն
ղիմողներուն:

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница «Взajemность», Варна